# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"09" հուլիսի 2015թ № 92Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> 2014 թվականի փետրվարի 6-ի N111-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թ. ապրիլի 10-ի N47-Ա որոշմամբ հաստատված մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015թ. աշխատանքային պլանի մոնիտորիգի և գնահատման առաջին կիսամյակի հաշվետվության, ո ր ո շ ու մ եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015թ. տարեկան աշխատանքային պլանի մոնիտորիգի և գնահատման առաջին կիսամյակի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. հուլիսի 9
ք. Կապան